Վիրավոր զինվորներ

Կենտրոնացում

Մենք բոլորս պատերազմի մեջ ենք, և սատանան օգտագործում է մեր վերքերը՝ մեզ պարտության մատնելու համար, սակայն Հիսուսը եկել է՝ բուժելու մեր հոգիներն ու մեր զգացմունքային վերքերը:

Ուսումնասիրություն

Բանալի համար՝ Ղուկաս 4.16-21:

Հիսուսն ասաց, որ եկել էր գերիներին ազատ արձակելու: Մենք ունենք վերքեր, որ չենք կարող հաղթահարել՝ պարզապես դրանք անտեսելով: Դրանք խորությամբ մեր սրտի մեջ են, մինչդեռ Հիսուսն ուզում է բուժել մեր բոլոր վերքերը: Զգացմունքային բժշկությունը զարմանահրաշ ազատություն կբերի մարդու կյանքում.

- *Հիսուսն ասաց, որ եկել է բուժելու սրտով կոտրվածներին:*
  (Մաթ. 21.42, Եփ. 1:6):
  Կոտրված սիրտը մերժման պատճառ է դառնում մեր կյանքում: Սատանան կարող է օգտագործել մարդկանց մերժելու այս զգացողությունը՝ մեր ներսում ամրոցներ կառուցելու համար: Երբ մենք մերժում ենք Աստծուն, դրանով դուռ ենք բացում հակառակորդի համար: Մենք, հնարավոր է, զգացմունքային ամրոցներից ներքին բուժման կարիք ունենք, եթե պայքարում ենք հետևյալ երևույթների դեմ՝ բարկություն, անապահովության զգացողություն, հպարտություն, անկախություն, հեշտ վիրավորվող, չափազանց ամաչկոտություն և մշտապես վերահսկելու ցանկություն:
- *Հիսուսը եկել էր բուժելու մեր զգացմունքային ցավերը:*
  (Ղուկ. 4.18, Մաթ. 18.21-35):
  Զգացմունքային ցավը ներքին վիրավորվածություն է և կարող է մեզ պահել կապանքի մեջ: Ցավ ունենալ՝ նշանակում է ջախջախված լինել: Վիրավորվածությունների հետ կապված՝ Հիսուսն ասաց, որ մենք կարիք ունենք ազատագրվելու: Աննեռողամտությունն այն հիմնական դուռն է, որ վիրավորվածությունը կարող է բացել: Երբ ինչ-որ մեկը վիրավորում է մեզ, սատանան արդեն այնտեղ է, որպեսզի այդ վիրավորվածության միջոցով ամրոց կառուցի: Այդ ամրոցները, այսպիսով, ցույց են տալիս, որ մեր սրտում կան վերքեր, որոնք բուժման կարիք ունեն:

Քննարկում

1. Կարդա Եսայի 61.1-5-ը: Այս համարների մեջ ամենաշատն ի՞նչն է քեզ քաջալերում: Ինչո՞ւ:

2. Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ է հակառակորդն ամեն բան անում՝ մեր կյանքում այնպիսի բաներ բերելու, որոնք պատճառ կհանդիսանան, որ մեր սիրտը կոտրվի:

3. Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են մարդիկ դժվարանում գալ Աստծուն՝ իրենց կոտրված սրտերի համար բժշկություն գտնելու: Աստվածաշունչն ասում է, որ Աստված սեր է: Ի՞նչ ճանապարհներով է Աստծո սերը բժշկություն բերում մեր սրտին:

5. Եղե՞լ է քո կյանքում մի ասպարեզ, որտեղ քո սիրտը կոտրված է եղել, սակայն Աստված բուժել է քեզ: Որպես քաջալերանք մյուսների համար, կիսվիր այս վկայությունը:

6. Մի պահ ժամանակ հատկացրու՝ Տիրոջ հետ խոսելու և հարցնելու, թե արդյոք կա՞ քո սրտում մի հատված, որ կոտրված է, և Նա ցանկանում է բուժել այն: Հրավիրիր Նրան՝ գալու և բուժելու քո սրտի այդ հատվածը:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Սատանան օգտագործում է մեր կոտրված սիրտն ու վիրավորվածությունները՝ մեր կյանքում ամրոցներ կառուցելու համար:
- Հիսուսը եկավ բուժելու մեր սիրտն ու բոլոր վիրավորվածությունները:
- Ներողամտությունը փակում է դուռը սատանայի հարձակումների առաջ մեր կյանքում:

Աղոթիր

Հա՛յր, ես իմ կոտրվածությունն ու վիրավորվածությունները Քեզ եմ հանձնում: Բուժիր իմ սիրտը և հիշողությունները: Ես խնդրում եմ, որ հիմա ինձ բուժես բոլոր սթրեսներից և ինձ սուրբ մոռացկոտություն տաս: Ես հիմա, իմ կամքով, որոշում եմ ներել, մոռանալ և բուժվել: